ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի տնօրենի ժամանակավոր
պաշտոնակատար,
տնտեսագիտության թեկնածու

Լ. Ն. Սարգսյան
30 մայիսի 2022թ.

ԿԱՐԾԻՔ
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

ԱՍՏՂԻԿ ԳԱՌՈՐԳԻ ՊՈՂՈՍՅԱՆԻ «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ ԲՈՒՀԵՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ և ՍԵՂՄԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ՝ Ը.00.03- «ՖԻՆԱՆՍՆԵՐ, ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒԻ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Մասնակցում էին՝ Լիլիթ Սարգսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Քրիստինե Բաղդասարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Սվետլանա Դալլաքյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գրիգոր Մանուկյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Գևորգ Հարությունյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Մերի Մանուչարյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Շողեր Պողոսյան՝ տնտեսագիտ. թեկնածու, Տաթևիկ Փարսադանյան տնտեսագիտ. թեկնածու

Ֆինանսական վերահսկողությունն իր առջև խնդիր է դնում ոչ միայն գնահատելու հանրային ֆինանսավորման նպատակային ծախսերը բուհերում, այլև դրանց արդյունավետ օգտագործման արդյունքների ներկայացումը բարձրագույն մասնագիտական կրթական ծառայությունների շահառուներին՝ պետությանը, բուհերի վարչակազմին, ուսանողությանը, գործատուներին ի թիվս այլոց:

Այս նկատառումներով պայմանավորված՝ վերանայման կարիք է զգացվում ֆինանսական վերահսկողության գործառույթների շրջանակում: Եթե ոչ վաղ անցյալում վերահսկողության հիմնական գործառույթը բուհի ֆինանսական ռեսուրսների ժամանակին հավաքագրման ու ըստ նպատակայնության ծախսման մշտադիտարկումն էր՝ կանխարգելելու համար հնարավոր չարաշահումներն ու դրամական միջոցների անարդյունավետ օգտագործումը, ապա ներկայումս կարևորվում են նաև ֆինանսական վերահսկողության վերլուծական գործառույթները:

Ֆինանսական վերահսկողության ոլորտում վերանայումների կարիք է զգացվում ակադեմիական կրեդիտների կուտակման և հատկապես դրանց

փոխանցումներից բխող ֆինանսատնտեսական գնահատումների գծով: Եթե մինչև այժմ ակադեմիական կրեդիտները վերահսկողության կողմից դիտարկվում էին որպես ուսումնառության չափայնության միջոց, ապա կրեդիտների շարժունությունը և ուսանողի՝ սովորելու ընթացքում բուհից բուհ տեղափոխելը ֆինանսական հիմնախնդիր է առաջացնում համալսարաններում: Ներկայումս անհրաժեշտություն է զգացվում ֆինանսական վերահսկողության հարթակ տեղափոխելու ակադեմիական կրեդիտների շարժունությունը, քանի որ յուրաքանչյուր կրեդիտին վերագրվում է ոչ միայն ուսումնառության ծանրաբեռնվածություն, այլև ֆինանսական բաղադրամաս:

Բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության համակարգերի և ֆինանսական կառավարման տեսամեթոդաբանական հիմնախնդիրների քննարկումներն իրենց մեկնաբանություններն են ստացել ինչպես հայազգի, այնպես էլ արտասահմանցի հեղինակների կողմից: Սակայն, տվյալ ոլորտի բարելավմանն ուղղված վերոնշյալ հիմնախնդիրները դեռևս իրենց խորքային լուծումները չեն ստացել ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական վերահսկողության համակարգում, ինչն էլ նախորոշել է գիտական հետազոտության նպատակը և ատենախոսության առջև դրված խնդիրները:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է կատարել առաջարկություններ ՀՀ բուհերում ֆինանսական վերահսկողության բարելավման ուղղություններով:

Ելնելով հետազոտության նպատակից՝ առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել համալսարանների ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը և ներկայացնել ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման աղբյուրների դիվերսիֆիկացման հնարավորությունները,
- բուհերի ֆինանսավորման աղբյուրների շրջանակն որոշելիս հաշվի առնել ինչպես համալսարանական գործունեության հանրային և մասնավոր շահառուների սպասումները, այնպես էլ կրթական ծառայությունների մատուցման շուկայում ձևավորվող առաջարկի և պահանջարկի հավասարակշիռ վիճակը,
- գործունեության անբարենապաստ ֆինանսական շեղումների բացահայտման և հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ,
- անընդհատության սկզբունքով ներկայացնել ներբուհական ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում՝ նպատակ ունենալով կանխարգելելու բուհի ֆինանսական ռիսկերի ձևավորումն՝ ըստ գիտակրթական գործունեության պատասխանատվության կենտրոնների:

Հետազոտության ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Հետազոտության մեջ ուսումնասիրության օբյեկտ է հանդիսացել ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ֆինանսական համակարգը, ինչպես նաև ֆինանսական վերահսկողության ոլորտն իր գործառույթների շրջանակով: Հետազոտության առարկան ՀՀ բուհերում իրականացվող ֆինանսական

վերահսկողության գործընթացն է՝ իրեն հատուկ մեթոդաբանական առանձնահատկությունների կտրվածքով:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքը և նորույթը: Հետազոտության գիտական նորույթը ՀՀ բուհերում ֆինանսական վերահսկողության բարելավման գծով առաջարկությունների ներկայացումն է: Մասնավորապես.

1. հիմնավորվել է ՀՀ-ում բարձրագույն մասնագիտական կրթության ֆինանսավորման դիվերսիֆիկացված աղբյուրների շրջանակի ընդլայնումը՝ ներդաշնակություն սահմանելով բուհերի կայուն ֆինանսական գործունեությանն առնչվող հանրային և մասնավոր շահառուների սպասումների, ինչպես նաև կրթական ծառայությունների մատուցման շուկայում ձևավորվող առաջարկի և պահանջարկի միջև,
2. մշակվել է դիմորդի՝ ֆինանսական սպասումների հենքով կրթավճարների ձևավորման վերահսկողության մոտեցում, որը հնարավորություն է ընձեռում բացահայտելու ուսման վարձերի փոփոխության պատճառահետևանքային կապերը՝ ըստ ներքին և արտաքին ազդեցության միջավայրային ազդակների ազդեցությունների,
3. ակադեմիական կրեդիտների կուտակման և փոխանցման գործընթացը դիտարկելով ֆինանսական վերահսկողության կտրվածքով՝ առաջարկվել է կրեդիտների շարժունության արժեքային փոխակերպման համակարգ՝ ուսանող-ակադեմիական չափայնությամբ ներկայացնելով հաշվարկային դրամական ներհոսքեր և արտահոսքեր,
4. առաջարկվել է ըստ պատասխանատվության կենտրոնների գիտակրթական գործունեության անբարենպաստ ֆինանսական շեղումների բացահայտման և հաշվապահական հաշվառման տեղեկատվական համակարգ, որով հնարավորություն է ստեղծվում բուհերում իրականացնելու ֆինանսական հաշվետվողականության կազմակերպում և, դրանով իսկ, կանխարգելելու ֆինանսական ռիսկերի ձևավորումը՝ անընդհատության սկզբունքով:

Հետազոտության արդյունքների գիտագործնական և կիրառական նշանակությունը: Ատենախոսությունն իրենից ներկայացնում է բարձրագույն մասնագիտական կրթության ծառայությունների ֆինանսական վերահսկողության մեթոդական մոտեցումների տեսական և գործնական ուսումնասիրությունների հիման վրա մշակված համալիր հետազոտություն, որը ներառում է որոշակի հիմնարար առաջարկություններ՝ ուղղված ՀՀ բուհական համակարգում ֆինանսական վերահսկողական նպատակադրումների և կազմակերպչական գործառույթների բարելավմանը:

Դիտողություններ աշխատանքի վերաբերյալ

Ատենախոսություն ունի որոշակի թերություններից, որոնցից կցանկանայինք նշել հետևյալները.

1. Աշխատանքում արտացոլված չէ «Մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորում» «ԲՈՒՀ–ի ֆինանսական վերահսկողություն» ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ՄԵՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ:
2. Աշխատանքը ամբողջական կլիներ, եթե վերլուծվեր ԲՈՒՀ-ի ծախսերի կազմը, կառուցվածքը, որոշվեր հիմնական ծախսերի նվազեցման պահուստները,
3. Ըստ պատասխանատվության կենտրոնների բյուջետավորումը իրականացելու համար անհրաժեշտ էր, որ հեղինակը ներկայացներ ծախսային կենտորոնների նորմատիվներ, կազմեր բյուջեներ, նշվեր յուրաքանչյուր կառուցվածքային ստորաբաժնման պատասխանավությունը բյուջեի կատարման մասով:
4. ԲՈՒՀ-ի կողմից կրթավճարների մեծությունը որոշելիս անհրաժեշտ էր հաշվի առնել դրա վրա ազդող գործոնները, որոնք մասնակիորեն են ներկայացված աշխատանքում:
5. Աշխատանքում չի դիտարկվում հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, չի կատարվում գրականության ակնարկ:
1. Աշխատանքում չեն ձևակերպվել <<ԲՈՒՀ>> և <<համալսարան>> եզրույթները և ամբողջ ատենախոսության մեջ չի հստակեցվում դրանց տարբերությունները: <<ԲՈՒՀ>> եզրույթն իր մեջ ներառում է ոչ միայն համալսարանական, այլև ոչ համալսարանական տիպի հաստատություններ(օր.՝ ինստիտուտ): Ստացվում է, որ Գլուխ 1-ի «Ֆինանսական համակարգի գործունեության առանձնահատկությունները համալսարաններում» վերնագիրը ավելի նեղ հասկացություն է, քան դրա մաս կազմող 1.3. «Ֆինանսական վերահսկողության գործառույթների բարելավման հիմնախնդիրները ՀՀ բուհական համակարգում>» ենթագլուխը:
6. Աշխատանքում դիտարկելով մասնագիտական կրթական համակարգի ֆինանսավորման միջազգային առաջավոր փորձը, ցանկալի կլիներ վերլուծել նաև զարգացող, մասնավորապես՝ ԵԱՏՄ երկրների փորձը: Ինչպես նաև համեմատական վերլուծությամբ գնահատել ՀՀ դիրքերը այդ երկրների շարքում:
7. 1.3 ենթագլխում առաջարկվում է ֆինանսական վերահսկողությունը «կաթսայական մոտեցումից» վերափոխել և ձևավորել ֆինանսական պատասխանատվության կենտրոններ: Աշխատանքը կշահեր, եթե եղինակը ներկայացներ հաշվարկ, որ որում կհիմնավորվի կենտրոնների ներդրման արդյունավետությունը(այսինքն կետրոնի առկայությունը ավելի շատ եկամուտ կապահովի, քան դրա վրա ծախսվել է):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Աստղիկ Պողոսյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն և ամբողջական հետազոտություն: Հեղինակը հանդես է բերել մասնագիտական և վերլուծական անհրաժեշտ մակարդակ, ինչի մասին են վկայում բուն ատենախոսությունը և դրանում ստացված արդյունքները:

Ներկայացված սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ընդգրկում է աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները: Հետազոտության հիմնական դրույթներն արտացոլված են հրապարակված վեց գիտական աշխատանքներում:

Այսպիսով, Աստղիկ Գևորգի Պողոսյանի՝ «Ֆինանսական վերահսկողության հիմնախնդիրները ՀՀ բուհերում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող ՀՀ ԲՈԿ-ի պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.03 – «Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Ատենախոսությունը քննարկվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի՝ որպես առաջատար կազմակերպության, «Ատենախոսությունների քննարկման և կարծիքների ներկայացման» հանձնաժողովի նիստում (30.05.2022թ., արձանագրություն թիվ 17):

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
առաջատար գիտ. տնտեսագիտ. թեկնածու **Գ.Մանուկյան**

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
Գիտ.աշխատող գիտ. տնտեսագիտ. թեկնածու **Գ.Հարությունյան**

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
Գիտ.աշխատող գիտ. տնտեսագիտ. թեկնածու **Տ.Փարսադանյան**

Տնտեսագիտ. թեկնածուներ Գ.Մանուկյանի և Գ. Հարությունյանի , Տ.Փարսադանյանի ստորագրությունների «իսկությունը» հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի գիտ.քարտուղար
տ.գ.թ., դոցենտ **Ք.Բաղդասարյան**
Կ.Տ.
30.05.2022թ.